

ԱՆՑՈՐԴԸ

(Դիտողություններ Կոստան Ջարյանի արձակի մասին)

Կոստան Ջարյանի ստեղծագործությունը 20-րդ դարի հայ գրականության քիչ ուսումնասիրված էջերից մեկն է և՛ մեզանում, և՛ սփյուռքում: Հնարավոր է, որ Կոստան Ջարյանի գրված մի տեսակ միջանկյալ դիրքը մեր նորագույն գրականության համատեքստում նրան երկար ժամանակ դուրս է դրել և՛ արևելահայ (խորհրդահայ), և՛ սփյուռքահայ գրականագետների ուշադրությունից¹:

Ի տարբերություն Ջարյանի բանաստեղծության, որ դեռ մինչև 20-ական թթ. արդեն հայտնի էր, Ջարյանի գեղարվեստական արձակը սկսվում է 20-ական թթ. և, որ շատ էական է, նրա արձակի սկզբնավորումը կապվում է գրողի՝ Հայաստանում գտնվելու հետ: Ինչպես հայտնի է, 1922 թ. Կ. Ջարյանը եկավ Հայաստան, մի քանի տարի դասախոսություններ կարդաց Երևանի պետական համալսարանում և 1924-ին հեռացավ Հայաստանից: Դրանից հետո է, որ ասպարեզ եկան նրա արձակի ամենամշանավոր գործերը՝ «Անցորդը և իր ճամփան» գիրքը, «Բանկոռպը և մամուլի ոսկորները» և «Նավը լեռան վրա» վեպերը (առաջին երկու գրքերը նախապես տպագրվել են Բոստոնի «Հայրենիք» ամսագրի էջերում): Երեք գրքերն էլ նվիրված են 20-30-ական թթ. Հայաստանի կյանքին: Ավելի ճշգրիտ՝ «Նավը լեռան վրա» վեպը պատկերում է Առաջին հանրապետության առօրյան, նրա անկումն ու խորհրդային կարգերի հաստատումը, «Անցորդը և իր ճամփան» գիրքը պատկերում է գրողի՝ Հայաստանում անցկացրած երեք տարիները, իսկ «Բանկոռպը...»՝ առաջին վերափոխումները Հայաստանում, խոսվում է նաև կոլտնտեսությունների մասին, ասել է թե, ժամանակագրական իմաստով այս վեպը անցնում է երեսնական թթ. սահմանները: Ուրեմն, Ջարյանի արձակի ամենամշանավոր գործերը ընդգրկում են Հայաստանի պատմության շատ դրամատիկ մի շրջանը՝ 1918-ից մինչև 30-ականների սկիզբը:

Գրքերի այս շարքը սկսվում է «Անցորդը և իր ճամփան» հատորով, որ կարելի էր համարել ուղեգրություն կամ ուղեգրական վեպ: Բայց սովորաբար ուղեգրությունները գրվում են օտար երկրներ կատարած ճա-

նապարհորդությունների մասին, իսկ Կոստան Ջարյանի գիրքը նվիրված է իր հայրենիքին: Չերոսը, որ ինքն է՝ հեղինակը, օտար երկրներում թափառելուց հետո գալիս է իր հայրենիքը՝ այնտեղ աշխատելու և հայրենիքը ճանաչելու համար: Այս իրողությամբ արդեն ուրվագծվում է Ջարյանի մեծ արձակի մի շատ էական կողմը, որը շարունակում և խորացվում է հաջորդ երկու գրքերում՝ հերոսը գալիս է դրսից, ծագում մտնել, խորանալ հայրենիքի եության մեջ, բայց դա շարունակվող, անվերջ ընթացք է, ու այս դրսի հայացքը դառնում է նրա գրքերի ներքին կառուցվածքի կարևոր հատկանիշը: Գլխավոր հերոսը, որի դիրքերից ներկայացվում է ամեն ինչ, երբեք մինչև վերջ չի ծուլվում իր հայրենի աշխարհին, մինչև վերջ չի դառնում նրա մասը՝ պահպանելով «դրսի» հայացքը: Թերևս այս իմաստն է արտահայտում նաև ուղեգրությունների վերնագիրը՝ «Անցորդը և իր ճամփան»։ մարդը, անկեղծորեն ձգտելով դեպի իր հայրենիքը, սիրելով այն, այդ հայրենիքում էլ մնում է իբրև անցորդ, որը եկել է ու պետք է գնա: Ջարյանի կենսագրության առանձնահատկությունները (այն, որ մանուկ հասակում տարվում է արտասահման, վաղ տարիներին, հայերեն չիմանալով, խոսում է այլ լեզուներով, գրում այլ լեզուներով և հետո միայն, աստիճանաբար, սովորում է իր հայրերի լեզուն՝ արևելահայերենը), անկասկած, իրենց որոշիչ կնիքն են դրել նրա աշխարհընկալման առանձնահատկությունների վրա, նրան դարձրել յուրատեսակ «անցորդ»։ Բայց, միաժամանակ, և սա, թերևս, ավելի կարևոր է, նրան դարձրել են հայկական հոգեբանության կարևոր կողմերից մեկի արտահայտիչը գեղարվեստական գրականության մեջ. ի վերջո, մեր ժողովրդի մի մասը, ճակատագրի բերմամբ, հայտնվելով օտար ափերում, «դրսից» էր նայում իր հայրենիքին, «դրսից» էր ընկալում նրա կերպարը:

Եվ այսպես՝ հայ մտավորականը գալիս է Հայաստան, գալիս է եվրոպական երկրներում երկարատև թափառումներից հետո: Նրան հրապուրում է այն նոր իրականությունը, որը ստեղծվում է Հայաստանում: Հայտնի է, որ սոցիալիզմի գաղափարները հրապուրել են երիտասարդ Ջարյանին, որ նա ոչ միայն տեսել, այլև ծանոթ է եղել Լենինին: Բայց ուղեգրություններ գրելիս նա արդեն խորապես հիասթափված է տեսածից ու ապրածից: Խորհրդային Հայաստանի իրականությունը նրան ներկայանում է ամենամռայլ գույներով: Քաղաքական կյանքը տեսնվում է իբրև մոլեռանդության, տոտալ հետապնդումների ու երեսպաշտության մի խառնուրդ: Տնտեսական կյանքն ու կենցաղը եվրոպական հարմարություններին սովոր մարդուն դնում են դժոխային վիճակի մեջ. ինչ-որ խոնավ ու մութ շենքում նրան ու ընտանիքին տալիս են մեկ սենյակ, որը վարագույրներով մասերի են բաժանում՝ խոհանոց, ննջարան և այլն:

Բարոյական տեսակետից ևս որևէ պայծառ կետ Ձարյանի աչքին չի ներկայանում. բոլորը մտահոգված են իրենց մի կտոր հացի ճակատագրով, չարացած են մեկը մյուսի դեմ, և, իհարկե, չկա հավատ ապագայի նկատմամբ: Չի խնայում ո՛չ կուսակցական-պետական գործիչներին, ո՛չ մտավորականությանը, ո՛չ էլ հասարակ մարդկանց: Բոլորը երևում են գորշ, միատոն, անհրապույր տեսքով:

Մտավորականին, մտածող մարդուն, իհարկե, առաջին հերթին ճնշում են անվստահությունը, ամենօրյա հսկողությունը: Ընթերցողը հեշտությամբ պետք է պատկերացնի այն խեղդուկ մթնոլորտը, որն ստեղծվել էր Ձարյանի շուրջ. դասախոսությունների ընթացքում պետք էր ամեն կերպ հարմարվել մարքսիզմին, այն էլ նրա այն տարբերակին, որը ընդունվում էր խորհրդային կոմունիստների կողմից: Կարելի է գուշակել, որ Ձարյանը ներքին թշնամանք մարքսիզմի նկատմամբ չուներ. մանավանդ, ինչքան էլ այդ առաջին հայացքից տարօրինակ թվա, իր ժամանակի՝ 20-րդ դարի արևմտյան հասարակությունը նա քննադատում էր մի ելակետից, որ չէր կարող շատ հեռու լինել մարքսիզմից: Բայց խորհրդային իրականությունը նրան օտար է. նա չի կարողանում որևէ հենակետ գտնել այդ իրականության մեջ: Ուղեգրության շատ էջերում չի կարելի չզգալ պարզ չարացածությունը, որը կենցաղային մակարդակով միանգամայն հասկանալի էր. մութ ու խոնավ սենյակը, երեխայի հիվանդությունը, սննդամթերքի պակասը, հարևանների սառը, երբեմն թշնամական հայացքները՝ այս բոլորը չէին կարող լավ զգացումներ առաջացնել մարդու հոգում: Բայց երբ հեղինակը սկսում է ծաղրել նաև այնպիսի բաներ, ինչպես, օրինակ, երաժշտական թատրոնի ստեղծումը Երևանում, մտածում ես, որ չարացածությունը նրան երբեմն շատ է խանգարում: Նրա հայացքը, ինչպես հետո կտեսնենք, «Բանկոտալը և մամուլի ոսկորները» վեպում ավելի հավասարակշռված է դառնում կամ գոնե ձգտում է հավասարակշռության: Բայց ուղեգրություններում այդ հավասարակշռվածության հետքն անգամ չկա: Իր գործընկերներին՝ համալսարանի դասախոսներին, բոլորին, ներկայացնում է իբրև խեղճ, գավառական մտածողությամբ ստրկամիտ մարդկանց: Չարենցն ու Թումանյանը չեն խուսափում նրա սարկազմից:

Լինում է Հայաստանի շրջաններում, հանդիպում հայ գեղջուկներին, սրանք էլ խորթ են մնում հեղինակի հոգուն. խեղճ, ցնցոտիավոր, մութ – այսպիսիք են հայ հասարակ մարդիկ նրա ուղեգրության մեջ:

Բայց ինչքան էլ մռայլ են նրա գծած պատկերները, սերն ու անկեղծ մղումը դեպի հայրենիքը, դեպի նրա ոգին չեն կորչում նրա տողերի արանքում: Հայրենիքից նա հեռանում է ոչ թե ատելությամբ, այլ ակսիուսանքով, ստիպված (նրան հասկացնում են, որ իր գլխին ամպեր են կու-

տակվում, կարող են ձերբակալել): Հեռացումը չի նշանակում կապերի խզում հայրենիքի հետ. հեռվից էլ նա շարունակելու է մտածել Հայաստանի մասին, փորձելու է հասկանալ նրան:

Կոստան Ջարյանի վերաբերմունքը խորհրդային հասարակության հանդեպ արձագանքում է ռուս և եվրոպական գրականության մեջ այդ նույն տարիներին կամ քիչ ավելի ուշ արտահայտված տրամադրություններին: Հատկապես անհատի, նրա հոգևոր անկախության նկատմամբ եղած վերաբերմունքը խորհրդային հասարակության մեջ, զանգվածի գերադասումը անհատից ամենից ավելի է շարժում նրա զայրույթը: Մի բան, որ այնպես հստակ զգացվում է նաև հաջորդ վեպի վերնագրում՝ «Բանկոռպը և մամուլի ոսկորները»: Բանկոռպային, համահարթեցված, զանգվածային մտածողությունը հակադրվում է կյանքի ներքին բովանդակությամբ, մարդ անհատի հոգուն: Ջամյատինի «Մենքը» և Օրուելի «1984» և «Անասնաֆերման» վեպերը հենց նույն դիրքերից էին երգիծում խորհրդային և առհասարակ ամբողջատիրական հասարակությունը:

Բայց, վերջին հաշվով, Ջարյանի ինչպես մյուս, այնպես էլ այս գիրքը հետաքրքրական է ոչ միայն կամ նույնիսկ ոչ այնքան քաղաքական գնահատականներով. դա միայն առաջին երեսն է: Ջարյանը խորհրդածում է Հայաստանի մասին, նրա բնության, նրա ոգու մասին, նրա պատմության ու ամացած ճանապարհի: Եվ հենց այս խորհրդածություններն են նրա գրքի ամենամնայուն, հետաքրքրական էջերը: Այստեղ Ջարյանը շարունակում է «Մեհյանի» ժամանակների իր տրամադրությունները: Այստեղ նշենք միայն մի քանի հատվածներ, հատկապես Սևանա լճի նկարագրությանը նվիրված էջերը, որոնցում կարծես Ջարյանը պատռում է կոնկրետ ժամանակի սահմանները և մտնում հայրենի բնության հավերժական գոյության ներսը: Անկասկած, Ջարյանն ունի Հայաստանի բնության շատ ինքնատիպ ընկալում, որը երևան է գալիս արդեն նրա բանաստեղծություններում և պոեմներում, մանավանդ դյուցազներգություններում և «Տատրագոմի հարսում»: Հայաստանի բնությունը Ջարյանի համար կենդանի առասպել է, Արա Գեղեցիկի ժամանակների շունչը նա զգում է նաև այսօր. և եթե մարդկանց նվիրված էջերը համակված են գորշությամբ, ապա բնությանը նվիրված էջերը պայծառ են, տպավորիչ: Հենց այս էջերում է, որ Ջարյանն ամենից ավելի է մոտենում իր փնտրած հայրենիքի ոգուն:

Բայց ոչ միայն բնությունը, պատմությունը ևս շատ հետաքրքրական խորհրդածությունների առարկա է Ջարյանի ուղեգրություններում: Ահա սկզբից մի քանի տող. «Ամեն մի խորհող հայ՝ մորկահար այս դարու ա-

լիքների կատարին պատգամներ է դրկում, բայց ոչ մի պատասխան չի ստանում»²: Չասենք, թե համաժողովրդական զգացողություն է արտահայտում այստեղ Ջարյանը, բայց հայ անհատի մասին ասածը, այն էլ «անցորդ» հայի, մտածել է ստիպում:

Նույն էջում հանդիպում ենք այսպիսի տողերի. «Եվ մենք, իզուր, խեղճ ձկնորսների նման պատռած ուռկան ենք նետում անցյալին: Ավանդությունը գեղեցիկ գերեզման է: Ինչ-որ մի բան կանգ է առել անարժան քարացումով:

Ոչ խաբենք, ոչ էլ խաբվենք — այո — բոբիկ անցնում ենք վաղուց հնձված արտի վրայից:

Եվ սակայն, ապրելու, ստեղծելու դեռ այնքան եռանդ կա մեր մեջ: Կարելիությունների այնպիսի անզուսպ վազք»: Շատ թե քիչ լավատեղյակ ընթերցողն այս տողերում իսկույն պետք է որսա զարմանալի նմանությունը Չարենցի ստեղծագործությանը, անցյալի նկատմամբ նրա վերաբերմունքին: Այդ «վաղուց հնձված արտը» շատ է հոգեհարազատ Չարենցի «մեր անանցյալ անցյալին»: Անցյալում չպետք է փնտրենք մեր ոգևորությունների աղբյուրը: Կարելի է համաձայնել սրան կամ չհամաձայնել: Բայց, ինչպես Չարենցի երկերում, այստեղ էլ գործ ունենք ոչ թե սառը դատողականության, ճշմարտության սառը արձանագրման, այլ հայրենիքի պատմությունը սրտով ապրող մարդու հոգու արծազանքի հետ, որի կողքով չի կարելի անտարբեր անցնել: Ահա թե ինչպես են իրար «հանդիպում» երկու հայ գրող, որոնք երբեք իրար շատ մոտիկ չեն եղել...

«Բանկոտպը և մամուռի ոսկորները» գրվել է այս նույն տպավորությունների հիման վրա. այս վեպում Ջարյանն աշխատում է դուրս գալ մեկ անհատի ընկալումների շրջանակից, գործողությունների ոլորտն են ընդգրկված բազմաթիվ գործող անձինք՝ և՛ հայեր, և՛ օտարազգիներ՝ Չայաստանում աշխատող ամերիկացիներ: Դեպքերը տեղի են ունենում ոչ միայն Չայաստանում, այլև եվրոպական տարբեր երկրներում: Բայց, միևնույն է, վեպի ոչ միայն սյուժետային, այլև գաղափարական կենտրոնը նույնատիպ հերոսն է՝ Իբերյանը՝ հայ մտավորական՝ կյանքի մեծ մասը եվրոպայում անցկացրած, եվրոպական ոգով կրթված: Նրա կյանքի հանգամանքները շատ բանով հիշեցնում են Ջարյանի կյանքի հանգամանքները. Իբերյանն էլ գալիս է Չայաստան, ցանկանում մասնակցել նոր Չայաստանի շինարարությանը, բայց ստիպված է լինում հեռանալ հայրենիքից՝ խուսափելով հնարավոր ծերբակալությունից: Այնպես որ Իբերյանը հարազատ եղբայրն է ուղեգրությունների հեղինակ-հերոսի, նրա գաղափարների ու մտքերի շարունակողն ու խորացնողը: Այս վերջինները շատ մեծ նշանակություն ունեն վեպի կառուցվածքում, ավելի

ծիշտ՝ դրանցով է որոշվում վեպի տիպը: Այն կարելի է համարել յուրատեսակ գաղափարական (կամ գաղափարների) վեպ: Իբերյանը ջանում է հասկանալ իր երկիրը և նրա մարդկանց, խորհրդածում է այդ երկրի անցյալի, ներկայի և ապագայի մասին: Ահա այս է գլխավորը վեպում. մնացած բոլոր մանրամասները, կերպարները, սյուժետային գծերը լրացնում են այս գիծը: Այն, ինչ ասում է Ջարյանն իր մյուս վեպի՝ «Նավը լեռան վրա»-ի առիթով՝ «հոգիների պատմություն», միանգամայն ճիշտ է այս վեպի վերաբերմամբ ևս: Պատմական դարաշրջանը, որը ներկա է վեպում, ավելի շատ նյութ է գլխավոր հերոսի խորհրդածությունների համար, նրա «հոգու պատմությունը» հասկանալու համար, քան թե գեղարվեստական հետազոտության ինքնուրույն առարկա: Վեպի առանձնահատկությունները, ինչպես և թերությունները, սկիզբ են առնում այս կետից:

Սյուժետային իմաստով վեպն անավարտ է. 1933թ. դադարում է վեպի գլուխների տպագրությունը «Չայրենիքում», և, ինչպես վկայում են հետագայի հրատարակողները, «1933 դեկտեմբերի համարին մեջ լույս տեսած բաժնի ավարտին դրված է «շարունակելի», սակայն ոչ մեկ շարունակություն լույս տեսած՝ անկե ետքը»³: Շարունակության հետքերը ցայսօր հայտնաբերված չեն: Չնարավոր է, ինչ-ինչ բաներ հայտնաբերվեն գրողի արխիվում: Բայց ինձ ավելի հավանական է թվում, որ գրողն ինքն անավարտ է թողել վեպը⁴: Այն, ինչ ուզում էր ասել, ասել էր արդեն գրված էջերում, ավարտվել էր Իբերյանի կյանքը Չայաստանում, և ներկայացվել էր նրա գաղափարների ամբողջական համակարգը: Եվրոպայում նրա կյանքը նոր բան չէր կարող տալ: Ինչ վերաբերում է մնացած հերոսներին, որոնց կյանքը պետք է պատկերվեր շարունակության մեջ, նրանք չէին կարող լրջորեն շահագրգռել Ջարյանին: Ի՞նչ ինքնուրույն հետաքրքրություն պետք է ունենար բոլշևիկ գործիչ Չայկը (մախկին որբ, որը հոգեկան բեկումների գնով դառնում է աչքի ընկնող գործիչ) անկախ Իբերյանից, որը հեռացել էր արդեն: Մանավանդ որ Չայաստանի կյանքի այդ շրջանը անծանոթ էր Ջարյանին, և դրա մասին նա կարող էր գաղափար կազմել միայն մամուլի հաղորդումներից... Ինչևէ, չբացառենք, որ ապագայում կարող են հայտնաբերվել շարունակության էջերը: Բայց այն մեծածավալ հատվածը, որ մնացել է այդ վեպից (Բեյրութի 1987թ. հրատարակության մեջ՝ 641 մեծադիր էջ), լիովին հնարավորություն է տալիս խոսել վեպի առանձնահատկությունների մասին:

Ուրեմն, վեպն իսկապես «հոգու պատմություն է», առաջին հերթին՝ գլխավոր հերոսի հոգու պատմությունը: Իբերյանի կյանքի արտաքին հանգամանքները միայն միջոց են նրա գաղափարների աշխարհը բացահայտելու համար: Այսպիսի մի մանրամասն՝ Իբերյանը սիրահարվում

է ամերիկուհի Յելենին, որը «աշխարհ տեսնելու» համար իր բարեկամների հետ եկել էր Յայաստան: Սերը փոխադարձ է. Յելենն անմիջապես սիրահարվում է Իբերյանին, որը բարձր էր նրա շրջապատի բոլոր տղամարդկանցից: Բայց շատ շուտով մենք համոզվում ենք, որ այս գիծը ինքնին բոլորովին չի հետաքրքրում Ջարյանին: Նա ոչ մի ճիգ չի գործադրում երկու մարդկանց հարաբերությունների նրբերանգները հասկանալու, սիրո հոգեբանությունը բացատրելու համար: Յելենն նրան պետք է իբրև օտար մշակույթի ներկայացուցիչ, որպեսզի նրա աչքերով էլ գնահատի Իբերյանին և նրա ներկայացրած հայ մշակույթը (մի լրացուցիչ նրբագիծ «դոսի» հայացքի համար): Ահա թե ինչու այս սիրո պատմությունը հեշտ ու հանգիստ, մի տեսակ անցկատ ընդհատվում է Յելենի արտասահման՝ եվրոպա վերադառնալով: Մեկ-երկու հիշողություն ու գրություն, և ամերիկուհին անհետանում է Իբերյանի գլխից ու սրտից՝ առանց ընթերցողի մեջ էլ որևէ լուրջ հետք թողնելու...

Վեպն, իսկապես ասած, երկու գլխավոր հերոս ունի՝ մտավորական Վահան Իբերյանը և նախկին որբ Յայկը: Երկուսի գործունեության ուղիղտները հստակորեն սահմանազատված են. Իբերյանինը հոգևոր կյանքի ուղիղտն է, Յայկինը՝ առօրյան, հասարակ մարդիկ, միջին ծառայողները: Իհարկե, այս ուղիղտները երբեմն խաչաձևվում են, հատկապես խորհրդային իրականության քաղաքական կյանքի պատկերներում, բայց միտումը պարզ երևում է՝ այս երկուսի միջոցով ցուցադրվել են նոր Յայաստանի կյանքի տարբեր կողմերը:

Եվ այնուամենայնիվ, Իբերյանն է, որ կրում է Ջարյանի գաղափարների արտահայտման պատասխանատվությունը: Նա է վեպի գաղափարական կենտրոնը: Սրանով էլ հենց Իբերյանի կերպարն է դառնում վեպի իսկական գլխավոր հերոսը: Ընդ որում, Իբերյանի և Յայկի կերպարների միջև իսկական երկխոսական հարաբերություններ չկան, գաղափարական վեճ վեպում ըստ էության չկա: Այն, ինչ ասում է Իբերյանը, կասկածի ենթակա չէ, ճշգրտման ենթակա չէ: Վեպում չկա նրան հավասար որևէ մեկը, որ կարողանա նրա հետ վիճել: Ահա այս իմաստով, իբրև գաղափարների վեպ՝ Ջարյանի երկը սկզբունքորեն մենախոսական է, այն ընկալվում է իբրև մի ամբողջական մենախոսություն Յայաստանի, նրա առօրյայի, բայց ավելի շատ՝ նրա էության և ապագայի մասին:

Ինքը՝ հեղինակը, տալիս է մի բնութագիր իր հերոսին, որ շատ ճշգրիտ որոշում է նրա էությունը (և նրա դերը վեպում). «Իբերյանը այն հայերիցն է, որ ամբողջ իր կյանքը փնտրել է իր հայրենիքը: Ոչ թե հողային և տարածական այն հայրենիքը, որի մասին երազում են աշխարհի չորս անկյունը ընկած հայ միջնորդ վաճառականները և նրանց ծոցից

դուրս եկած մտավորականները, ոչ վերացական և զգայնական այն ազգասիրությունը, — Ալիշանի գրաբար ուտամավորները իտալացի երկրորդական երաժիշտների քայլերգներով զարդարված, — որ հեռավոր զանգակի մման հնչում է զոհողության և քաջության զգացումներից զրկված, գեղեցիկ ինքնախաբեությունների տակ պատսպարվող փոքրացած մարդկանց ականջներին, այլ՝ այն թանձրացյալ, իրական, ողբերգական համառ ապրելու և հանդգնելու կերպով ողբերգական հայրենիքը, որը միանգամայն իրականացած երազ չէ, այլ ելակետ, այլ նոր թռիչք առնելու և նոր վիթխարի կյանք դարձնելու մի վայր»⁵։ Այս հատվածը շատ նշանակալից է Ջարյանի վեպի ամբողջ փիլիսոփայությունը հասկանալու համար, և դրան մենք դեռ կանդրադառնանք։ Բայց առայժմ ուշադրություն դարձնենք միայն առաջին տողին։ Իբերյանն այն սերնդի ներկայացուցիչն էր, թերևս մի քիչ ուշացած, որը փնտրում էր իր հայրենիքը՝ հրաժարվելով նախորդ շրջանի բանաստեղծության և գրականության ստեղծած հայրենիքի պատկերից։ Այս տողերը, անշուշտ, արծագանքում են Տերյանի և Չարենցի հայրենասիրական քնարերգությանը, համաձայն կլիներ դրա հետ Ջարյանը, թե ոչ։ Այս երեք գրողներին միացնում էր դարասկզբին ծնունդ առած կիրքը՝ հասկանալ Չայաստանը, գտնել իսկական Չայաստանը, ասել է թե նրա հոգին, ի տարբերություն նախորդ քնարերգության, որ տարված էր ֆիզիկական հայրենիքի գեղեցկությամբ և պատմական հիշատակներով։ Բայց Իբերյանի (և Ջարյանի) դեպքում ասպարեզ է գալիս մի ուրիշ խնդիր. Իբերյանն ապրել էր հայրենիքից հեռու, և, զգալով իր ներքին անքակտելի կապը հայրենիքի հետ, հեռուներից գալիս էր դեպի հայրենիքը՝ այն տեսնելու, ճանաչելու, հասկանալու և նրա հետ ապրելու համար։ Սա զուտ հայկական, ազգային բարդույթ էր առաջացնում հայ մտավորականի մեջ, որը, ինչքան էլ ցանկանար, չէր կարող անմնացորդ լուծվել իր ժողովրդի մեջ։ Նա անխուսափելիորեն մնում էր «դոսի մարդ», որովհետև մարդ չի կարող իրենից հեռացնել այն ամենը, ինչ նրա մեջ ձևավորվել է ուրիշ, ոչ հայրենական միջավայրերում. այդ ամենը նրա համար արդեն էություն է, որից նա հրաժարվել չի կարող։ Այս տիպը շատ բնորոշ է հայոց պատմությանը, այն միայն մի կոնկրետ ժամանակի հետ կապված չէ։ Ինչքան եղել է հայոց պանդխտությունը, այնքան ժամանակ էլ կա և կլինի այս տիպը. այնպես որ, այս իմաստով էլ Ջարյանի ստեղծած կերպարը (և նրա եղբայրակիցները՝ ուղեգրության հեղինակը և Արա Չերյանը «Նավը լեռան վրա» վեպից) իր անշփոթելի տեղն ունի հայ գրականության հերոսների շարքում։

Այլ խնդիր է, որ Ձարյանը չի տալիս իր հերոսի հոգեբանական քննությունը, և առհասարակ, հոգեբանական վերլուծությունը Ձարյանի ուժեղ կողմերի թվին չի պատկանում, ոչ էլ նրա վեպի տիպը ենթադրում է այդպիսի վերլուծություն: Որտեղ էլ փորձում է դիմել այդպիսի քննության (հատկապես Յայկի գծի հետ կապված դրվագներում), ամենևին հաջողության չի հասնում:

Եթե Ձարյանի վեպը գաղափարական (կամ գաղափարների) վեպ է, ապա Իբերյանին էլ կարելի է անվանել գաղափարատիպ: Նրա կերպարն ամբողջանում է ոչ հոգեբանական վերլուծությամբ, որն, ինչպես ասացինք, շատ թույլ է, այլ այն գաղափարների շնորհիվ, որոնց կրողն է Իբերյանը: Այսպիսի հերոսին դժվար է նույնիսկ սովորական իմաստով գրական կերպար կոչել. բայց նրա ներկայացրած փիլիսոփայությունն ինքնին ուշագրավ է, հենց դա է դառնում հերոսի ինքնության չափանիշը:

Ձարյանն իր հերոսին հստակորեն հակադրում է հայ մտավորականությանը՝ վերջինիս նայելով վերևից. «Իբերյանը, իր դաստիարակությունով և առած կրթությունով, չէր պատկանում կաղապարված, տիպական այն հայ մտավորականների թվին, որոնց ավանդական մտածելու և զգալու կերպը գալիս է ճեմարանների նստարաններից, կիրակնօրյա պատարագների ժամանակ եկեղեցու բակում ունեցած խոսակցություններից, գյուղի սովորություններից, խաղերից և թոնրի վրա դանդաղ շեքվով խառնված ծանր կերակուրների համերից» (167):

Ակնհայտ է ծաղրական, գրեթե արհամարհական վերաբերմունքը հայ մտավորականության զանգվածի հանդեպ (որը շատ սուր արտահայտվում է նաև նրա հետագա խորհրդածություններում, մինչև կյանքի վերջը): Մի կողմից, Ձարյանի պատկերացրած՝ հայ մտավորականի կատարելատիպը պետք է կտրված լիներ այն նույն հայ ժողովրդի կենցաղից, որի մասին Ձարյանը այլ առիթներով խոսում է հիացմունքով: Իբերյանը, իր կյանքի հանգամանքների բերումով, հենց այդպիսի մտավորական է: Ձարյանի իսկ խոսքերով, մանուկ Իբերյանի «արմատը պոկել էին հայրենի հողից»: Եվ դրա համար էլ Իբերյանը չի կարող իրեն տեղ գտնել այդ նույն կենցաղով ապրող ժողովրդի մեջ: Սա է, որ առաջացնում է ազգային անլիարժեքության այն բարդույթը, որ բնորոշ է Իբերյանի մտածումներին: Սակայն, մյուս կողմից, այս տողերում մենք չենք կարող չլսել արձագանքը Տերյանի հայտնի խոսքերի՝ հայ «ծխական մտավորականի (ինտելիգենտի)» մասին և հայ մտավորականության մասին Չարենցի երգիծական և ոչ երգիծական գործերում արտահայտված կարծիքների⁶...

Ինչևէ, այսպես է ներկայացնում իր հերոսին Ջարյանը, և հետագա էջերում այս բնութագրումները լրացվում են նոր նրբագծերով: «Տարօրինակ վիճակ էր իր վիճակը: Վերջ ի վերջով, իր սեփական երկրում իսկ նրա վրա նայում էին ինչպես օտարականի վրա: -Ու անտարակույս, չնայած իր ճիգին, ամեն մի քայլափոխին նա զգում էր իր և իր շրջապատողների մեջ բացված աներևույթ այդ խրամատը» (229): Մի այլ տեղ, զրուցելով իր ամերիկացի բարեկամի հետ, Իբերյանն ասում է. «...ի ծննդանն մենք անցորդներ ենք, սահմանները անցնողներ, հորիզոնները ճեղքողներ» (303): Այս վերջին խոսքերի մեջ կա նաև ինքնահիացում, ինքնագնահատում, սեփական դերի գիտակցման հպարտություն: Բայց անցորդի թեման ամենևին պատահական չէ, և պատահական չէ, որ ուղեգրությունը կոչվում է «Անցորդը և իր ճամփան»: Իբերյանն անցորդ է, ճանապարհորդ, որի գլխավոր նպատակը, այո, հայրենիքը ճանաչելն է, բայց... իբրև «դրսի մարդ», իբրև «անցորդ»:

Ու դրա համար էլ երկրի կյանքն այնպես էլ «ներսից» չի տեսնվում. Իբերյանը փնտրում է այն, ինչ ինքը ուզում է, և իր փնտրածը չգտնելով՝ հիասթափվում է: Իբերյանը գալիս է Հայաստանը ճանաչելու համար. բայց նա եկել էր նախապես կազմված պատկերացումների բեռով, ուրոնք այնպես էլ թույլ չտվին նրան հասկանալու ներկա, իրական Հայաստանը: Ահա մի հատված նրա հուշատետրից (վեպի բնույթը հասկանալու համար պետք է ուշադրություն դարձնել այն բանին, որ, չբավարարվելով տարբեր զրույցների ժամանակ Իբերյանի ասածներով, նրա առօրյա մտածումներով, Ջարյանը գրում է մի ամբողջ բաժին՝ «Վահան Իբերյանի հուշատետրից», որտեղ շարունակում է զարգացնել իրեն հուզող գաղափարները). «Հեշտ չէր այդպես դուրսի կերպով բաժանվել մի վայրից, որի մասին տարիներով երազած էի, որի հետ մարմին դարձած հոգեկան գիտակից և անգիտակից ծգտումներով կապված էի, որի բովանդակությունը լեցրել էր սիրտս և միտքս լավագույն թռիչքներով և որ, բոցկլտացող խարույկի պես, տարիներով կանգնել էր աշխարհզգացուն միս կենտրոնում: Գուցե հենց այդ էր պատճառը, մտածում էի ես այն րոպեին, որ մենք մեկը մյուսին լավ չհասկացանք: Պատահում է կյանքում, երբ մենք հեռվում գտնվող կինը սնուցանում ենք մեր լավագույն հույզերով, հագցնում մեր երազներից հյուսված ոսկեփայլ մետաքսներով, աչքերին լույս ենք տալիս և շրթների վրա բոցեր գետեղում: Ու որովհետև հանդիպումի վայրկյանին չենք գտնում ծառի վրա շողշողացող արշալույսի հետքերը՝ մենք հիասթափվում ենք: Մինչ կինը արարած է ուրիշ արարածների նման: Ունի անշուշտ իր արտացոլման և իր ճառագայթի կերպը և ձևը: Իր հոգին, իր հարստությունը և իր թշվառությունը: Նա չի

ըմբռնում պատրանքիդ գեղեցկությունը, և դու չես ըմբռնում նրա ներքին ու արտաքին աշխարհի ուրույն իրականությունը» (402): Շատ անկեղծ և կարևոր խոստովանություն: Պատրանքները խանգարում են մտնել իրական երկրի կյանքի ներսը, հարազատանալ այդ երկրին: Բայց ճիգը, հայրենիքը գտնելու, հասկանալու անկեղծ ճիգը իրական է, և կերպարի արժեքը որոշվում է առաջին հերթին այդ ճիգով: Հայրենիքը հասկանալու ձգտումը միշտ էլ հայրենասիրության լավագույն արտահայտություններից մեկն է: Եվ մանավանդ, պատրանաբափությունը չի նվազեցնում նրա մեջ սերը հայրենիքի նկատմամբ: Իբերյանի հոգևոր դաշտում գտնվող հերոսներից մեկը՝ Գյուտ վարդապետը, էջմիածնի վանքից վռնդված նոր իշխանությունների ձեռքով, աշխարհի երեսին մենակ ու անպաշտպան, իր ամենածանր րոպեներին այսպես է դիմում հայրենիքին. «Հայոց աշխարհ, հայոց աշխարհ, ես ամբողջ իմ կյանքիս ընթացքին չեմ տեսել ուրիշ վայրեր, չեմ ճանաչել ուրիշ երկրներ: Ես ապրել եմ քեզ հետ և քեզ համար, շնչել եմ քո շունչովդ, տառապել եմ քո տառապանքներով, ուրախացել եմ քո ուրախություններով: Այստեղ չէ՞ այն Աստվածը, որին պաշտել եմ քեզ պաշտելու համար. այստեղ չէ՞ այն եկեղեցին, որին ծառայել եմ քեզ ծառայելու համար: Դու խաչ և համբարձում, վիշտ և բերկրանք, միջոց և նպատակ. Հայոց աշխարհ» (285): Այս ծերունին իր կյանքի արտաքին հանգամանքներով ուղիղ հակառակն է Իբերյանի. Հայաստանի սահմաններից դուրս չի եկել, Եվրոպա չի տեսել, բայց նրա էությունը յուրատեսակ արձագանքն է Իբերյանի ներքին աշխարհի մի կարևորագույն լարի, որովհետև Իբերյանը, Հայաստանից հեռանալով էլ, շարունակում է ապրել Հայաստանով. նրան Հայաստանին կապող մի ներքին բան կա, որ հոգեհարազատ է ծեր Վարդապետին:

Կա հերոսների մի ուրիշ խումբ էլ, որ կարծես լրացնում է Իբերյանի ապրումները: Դրանք այն ամերիկացիներն են, որոնք մարդասիրական առաքելությամբ գտնվում են Հայաստանում՝ էլենը, Օկոնորը և Գրեյը: Սրանցից վերջինը ներկայացնում է ամերիկյան հոգեբանության այն կողմերը, որոնք միանգամայն խորթ են Իբերյանին: Բայց առաջին երկուսը իսկապես լրացնում են գլխավոր հերոսին: Այս առումով շատ հետաքրքրական է լուսաբացը Սևանում, երբ էլենը մենակ գնում է կղզում զբոսնելու և շլանում է գույներով, բնությամբ: Այդ տեսարանը հիշեցնում է ուղեգրության («Անցորդը և իր ճամփան») այն հատվածները, որոնցում նկարագրվում է Սևանը: Այս դեպքում, իսկապես, Ջարյանն իր սեփական ներքնաաշխարհը բաժանում է երեք մասի՝ ստեղծելով հերոսների այս խումբը՝ Իբերյան, էլեն, Օկոնոր: Կենտրոնը, անկասկած, Իբեր-

յանն է: Մյուսների ապրումները, խոհերը ամբողջացնում են նրա փիլիսոփայությունը:

Բայց, մինչև առաջ անցնելը, փորձենք հասկանալ՝ ո՞րն է Ջարյանի աշխարհընկալման էությունը: Ջարյանի հերոսները ներքին վեճ չունեն քրիստոնեության հետ. քրիստոնեության ժխտում չկա նրա գործերում: Ընդհակառակը, նա մեծ հարգանքով է խոսում հայ եկեղեցու մասին (վկա՝ այն նույն ծեր քահանան, որ խոսում է Հայաստանի համդեպ իր սիրո մասին, վկա՝ Սևանի վանականները և այլն): Այստեղ կա մի երանգ, որ Ջարյանի վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ կապում է խորհրդային իշխանության առաջին տարիներին եկեղեցու դեմ հարուցված հալածանքների հետ: Այդ հալածանքները հերոսի և հեղինակի մեջ առաջացնում են հալածյալներին պաշտպանելու բնական ցանկություն: Բայց, անկասկած, սա միայն երանգ է: Ջարյանը ամենևին հակված չէ քրիստոնեությունն ու հայոց եկեղեցին դուրս դնելու ազգային հոգեբանությունից ու մշակույթից, և այդ հոգեբանությունն ու մշակույթը հասկանալու ձգտումը նրան ստիպում է հարգանքով խոսել և՛ հայ եկեղեցու, և՛ միաժամանակ հին աստվածների մասին, հեթանոսական աստվածների մասին, որոնք անմեռ ապրում են հայկական լեռնաշխարհում. նրա աշխարհընկալման, Հայաստանի նրա ընկալման մեջ այս հին աստվածները շատ կարևոր տեղ են գրավում: Այսինքն՝ Ջարյանը և իր հերոսները ցանկանում են մի ներդաշնակ ամբողջության մեջ միավորել հայ մշակույթի այդ երկու՝ հեթանոսական և քրիստոնեական գծերը: Այս բոլորը տեսնելու համար պետք է դիմել նախ և առաջ Օլոնորի գրած մի նամակին, որը վեպի հենց սկզբում է. «Հնուց ի վեր մարդիկ հրաբխային այս տարածությունները չափել են ոչ թե մղոն արձանագրող գերաններով, այլ մեկ սրբատեղից մյուս սրբատեղին տարածվող հոգեկան ճամփաների երկայնությամբ: Աստվածների քայլերին հետևելով, փայտացած մատների վրա շնչելով, տրեխները գետին զարնելով, մեջքը քթած (երևի կքա՞ծ — Ա.Ե.)՝ նրանք գնացել են հիմնավորց պատերին իրենց սրտերի լուրը տանելու համար և քարերի վրա դրոշմված պատգամները առնելու համար: Լեռների վրայով, ձորերի միջից, ժայռերը մագլցող վտանգավոր արահետներով, անապատը բաժանող կածաններով, մրսկոտ իրենց կրծքերի վրա անհասկանալի մի խենթություն սեղմած, այդ տեսանողները եկել կանգնել են այդ պատերի առջև, չոքել են, իրենց կնճռոտ ճակատները քսել են հողերին, ճաթոտած իրենց շրթունքները կպցրել փտած դռների տախտակներին, մոմ են վառել, խուճկ ծխել, ապա ոչխարի կամ եզան բերանին աղ սեղմելով՝ նրանց վայր են նետել, մեկ ծունկը կպցրել կրծքին, գլուխը դարձրել սեղանի վրայի որմնանկար-

ված գունահատ սրբերին և քրմապետական դամակը խոթել նրանց կոկորդը» (58): Հեթանոսական ու քրիստոնեականը, առանց իրար խանգարելու, միախառնվում են այս այնքան կարևոր, խորհրդանշական պատկերի մեջ:

Բայց, թերևս, հեթանոսություն-քրիստոնեություն խնդրից ավելի կարևոր է մարդու և հայրենի բնության կապի այն հետաքրքրական զգացումը, որ կա այս վեպում (և Ջարյանի մյուս գործերում): Այդ կապը, ամենասխեմատիկ ձևով, հետևյալն է նշանակում. բնությունը, այդ խստաշունչ լեռնաստանը ձևավորում է մարդուն, իսկ մարդը շունչ է տալիս նույն այդ լեռնաստանին: «Այդ մարդիկ նայում են լուրջ, պապանձված, ներքին այն նալվածքով, որը հատուկ է նրանց, որոնք կարողացել են ըմբռնել լեռների գագաթների հետ շարժվող գաղտնիքը: Չափել տարածությունը, որոնել ուղղությունը, կենդանական բնագոյով լրտեսել եղանակների առաջացումը, ականջ դնել բարձրացող հասկերի ածման, քամիների արագության, ամպերի ետևից եկող արևի այցելություններին,— տեսնել, տեսանել, ապրել որոշակի այն միջավայրում, որը հատուկ է միայն ամբողջական անհատին» (54): Օկոնորի այս միտքը լրացվում է մի այլ դիտողությամբ. «Այս երկիրը հասկանալու համար պետք է դիմել նրանց (հայ մարդուն, գեղջուկին — Ա.Ե.): Նրանք միտք են տվել այն բանին, որ միտք չունի, նշան են տեսել այնտեղ, ուր ոչինչն չի երևում: Սրանք բաց են արել անդունդների և պղնձե դռները, որսել են չտեսնված հերոսների ամեհի ստվերները և, սրբերի փեշերից բռնած, վազել են ամայության մեկ վայրից մյուսը փղոսկրե երազների արծաններ կանգնեցնելու համար» (59): Հայ մարդը ոգի է տվել բնությանը, դարձրել այն հոգևոր տարածություն. այս միտքը շատ կարևոր է Ջարյանի համար, դրան նա անդրադառնում է նաև «Նավը լեռան վրա» վեպում: Ամեն դեպքում Ջարյանի և նրա հերոսների փիլիսոփայական կառուցումների մեջ հայ մարդը և հայ բնությունը իրար հետ կապված են ամենախոր, ամենանախնական կապերով. այս կապի գիտակցությունը Ջարյանի պատկերներին մի յուրատեսակ մոնումենտալություն է տալիս, մի անկրկնելի երանգ. բայց, մյուս կողմից, այն մնում է ավելի շատ իբրև վերապրում, փիլիսոփայական խոհ և ոչ իբրև կերպար, մարդ, որովհետև այդ նույն մարդիկ, այդ նույն քահանաներն ու խենթերը, աշուղները և այլն կենդանի կերպարներ չեն դառնում, իրական մարդկանց Ջարյանը կարծես չի տեսնում:

Սակայն կենդանի հերոսի բացակայությունը հատուցվում է, թեկուզ ոչ լրիվ, փիլիսոփայական լարված խոհով, որը ընդգրկում է կեցության տարբեր կողմերը: Հայի փիլիսոփայությունը հյուսվում է առհասարակ

անհատի, մարդու փիլիսոփայության հետ: Իր այս գործում Ջարյանն առաջ է քաշում «արմենիզմի» տեսությունը՝ արմեն բառի տակ հասկանալով իսկական հային՝ ոչ-վաճառականին, ոչ խեղճ ու կրակ մտավորականին: Արմենը պետք է լինի սրանց հակադրությունը, նա իր մեջ պետք է կենտրոնացնի հայության լավագույն գծերը, որոնք աղավաղվել են պատմության ընթացքում: «Արմենը» վերջ ի վերջո մոտենում է նիցշեական «գերմարդուն»։ այս վերջինն օտար չէ Ջարյանին: Բայց դրա առաջացման ուղիները հետաքրքրական են:

Իբերյանը (և Ջարյանը) և նրա գաղափարակից հերոսները մերժում են արևմտյան քաղաքակրթությունը, մերժում են խորը, հիմնովին: Այդ քաղաքակրթության զարյանական քննադատությունը շատ կետերով մոտենում է մարքսյան քննադատությանը, հատկապես մարդու խնդրում: Արդեն Օկոնորի հիշված նամակում այսպիսի միտք կա. «Ինչքան հեռու է արդիական ամերիկյան մեր իդեալից (խոսքը հայ մարդու մասին է – Ա.Ե.)... Մենք որոնում ենք չափազանցված մարդը, գերարտադրականը, մասնագետը, մասսան, օրվան հռչակավորը, տենորը, միլիարդի տերը, ըմբիշը: Մենք անոթի ենք բոլոր այն երևույթներով, որոնք տարբեր են, օտար են մեզանից, բայց ներքնապես մենք լեցուն ենք մահվան վշտով և սարսափով: Եվ ի՞նչ էր համաշխարհային այս պատերազմը, եթե ոչ մահվան վախի հուսահատական ժեստ» (էջ 55): Մտածող մարդը մերժում է այս քաղաքակրթությունը, որը դատապարտված է, որը մեռնում է՝ Այս մարդը հայի մեջ տեսնում է այն, ինչ չկա ամերիկացու, առհասարակ բուրժուական քաղաքակրթության մարդու մեջ՝ մարդու ամբողջականությունը. «Այս լեռների վրա ապրող մարդիկ, որոնց մասին մենք այնքան մակերեսային գաղափար կազմած ենք՝ մասամբ իրենց մտավորականների միջակության պատճառով՝ ունին այն ինչ որ կազմված է դասական մարդու մեծությունը – միությունը այլազանի մեջ: Դասական անհատը լեցուն է, բովանդակալից է, ինչպես մարդկային մարմինը, ինչպես ծովը, աստղը, կենդանին, ծաղիկը: Նրան անկարելի է արմատահան անել, որովհետև նրա արմատները մխրճված են ամբողջի մեջ, ծալված են նրա ծագման շուրջը, խորհրդավոր կերպով միացած են ծովին և հողին, ծաղիկներին և աստղերին» (55): Այս ամբողջությունից է զրկված Արևմուտքի քաղաքակրթության մեջ ձևավորված մարդը՝ խեղճ, նյութի գերի: Օկոնորի այս նկատողությունները զարգանում և խորանում են վեպի մյուս էջերում, հատկապես Իբերյանի դատողություններում: Ահա թե ինչպես է Իբերյանը բնութագրում ժամանակակից Ամերիկան. «Միշտ էլ մարդիկ ձգտել են դեպի հարստությունը: Սակայն երբեք ոսկին այն անանուկ, հրեշային ուժը չի ներկայացել, ինչպես այսօր ա-

մերիկյան տնտեսության մեջ: Եվրոպական քաղաքակրթության մեջ, սկսած դասական շրջանից և միջնադարյան ավատականությունից, ոսկին ծառայել է իբրև միջոց և ոչ նպատակ: Ավատապետի կամ իշխանի համար ոսկին հրաշալի միջոց էր վկայելու համար առանձնահատուկ ծգտումներ — գեղեցիկ ծև, որակ, ընտրողություն, զգայնություն: Հռոմա և Պոմպեյի վիլլաները, Մեդիչիների նրբագին ճաշակը... Արդի Ամերիկայում դրամի նվաճումը, փող վաստակելը կոչվում է առաքելություն (թերևս պետք է լիներ «առաքինություն» — Ա.Ե.), ինքը իրմով գոհացող և ինքը իր մեջ ամփոփվող մի գործունեություն: Հարուստը իր դրամի տերը չէ, այլ մատակարարը, ինչպես որևէ իր մեկ ծառայողը» (196): Այս տողերի տակ կարող էր ստորագրել ամեն մի սոցիալիստ, համենայն դեպս, այս տողերը շատ են հիշեցնում, օրինակ, 20-րդ դարի ամենահամոզված սոցիալիստներից մեկի, որը նաև Մարքսի լավագույն մեկնաբաններից մեկն էր, Էրիխ Ֆրոմմի հետազոտությունները: Ամեն դեպքում Ջարյանի համար դրամի պաշտամունքը վերժամանակյա երևույթ չէ: Նա հստակորեն տեսնում է այն սահմանները, որից այս կողմ դրամը դառնում է մարդկանց կուռքը, և ամբողջ կյանքը ենթարկվում է դրամ շահելու ինքնանպատակ, բայց սպանիչ գործընթացին: Անհատի հոգևոր ստրկացումը կապված է մեծ չափով այս նյութապաշտության և դրամապաշտության հետ:

Այստեղից է սկիզբ առնում նիցշեական գերմարդու այն իդեալը, որ հայտնվում է Ջարյանի վեպի էջերում: Անհատի ազատությունը այն գլխավոր արժեքն է, որ պաշտում է Իբերյանը: Դա ոչ միայն քաղաքական ազատություն է, այլ, առաջին հերթին, հոգևոր ազատություն, հոգու ազատություն: քաղաքական ազատությունը այս ազատության նախապայմանն է: Անհատի ազատության իդեալը կենտրոնական ջիղն է շատ ու շատ ուսմունքների, բայց ամբողջ խնդիրն այն է, թե ինչպես է դիտվում այդ ազատությունը մարդկային հարաբերությունների ընդհանուր պատկերում: Այդ ազատությունը Իբերյանը բարձր է դասում ամեն ինչից, նաև՝ բարոյական կարևորագույն կատեգորիաներից՝ բարուց, չարից, սիրուց. հենց այստեղ է նա մոտենում Նիցշեին. «Ներկա պարագայում, վերատեսնել բոլոր արժեքները, վերալինել, նորագոյանալ, վերահաստատվել: ...Ու նախ և առաջ, «խաչի վրա չարչարվող և սիրով տառապող» աստվածամարդկային միթոսին դիմադրել մարդ-Աստվածը՝ ճառագայթող լույս և զորություն, աշխարհակալ իրագործումների բարձրագույն գագաթ: Վերացական և երկվորական տիեզերահասկացության հակադրել բնակավոր և ազատ միության, իր մեջ փակված, ինքը իրմով բավարարվող, տիրապետական կամքը: Աստուծո «ծառաների և զա-

վակների» ցեղին հակադրել ազատների և ազատագրողների ցեղը, որոնք Աստուծո մեջ տեսնում են այն բարձրագույն ուժը, որին նրանք կարող են ստեղծել, որին կարող են հպատակվել եթե ուզեն և որի դեմ կարող են նաև պայքարել՝ ճակատը բարձր, առնականորեն, առանց կանացի հուզումի, առանց վիատության, առանց աղոթքի, որովհետև աստվածաստեղծները պատկանում են նույն աստվածային բնության և նույն բոցե բազուկներով կարող են ընդունել ամբողջ տիեզերքը, իբրև իրենց եսի երաժշտական արտահայտությունը: Այդ նոր մարդիկ կարիքի և կախումի զգացումներին պիտի հակադրեն կարողության և բավարարության զգացումը. հավասարության գաղափարին՝ տարբերության, հետավորության, կարգապետության, ազնվականության գաղափարը. ընկերվարության՝ հոգեպես բարձրագույն զարգացման հասած անհատականությունը. սիրո, երջանկության, խաղաղության, մխիթարանքի պահանջին նրանք պիտի հակադրեն հերոսական արհամարհանքը, մաքրամաքուր կամքի և բացարձակ գործողության պողպատե օրենքը: Ու նաև, նախախնամական աշխարհակացության դեմ նրանք պիտի ցցեն իրենց ողբերգական աշխարհակացողությունը, որով մարդս բնության և տարերքի ուժերի քառսում մնում է միմակ ինքը իր հետ, դառնում է ինքը իրեն փրկիչը և պարտադրում է իր կամքը իր սրտին և իր ուղեղին: Ահ, մերժել, չընդունել տնտեսական, բանկոռպային այն արարածը, կուսակցական այն մրջյունը, որը տեղը չէ իր բախտի, որը իր գահից վայր է ընկել փոշիների մեջ և վազում է պատմության և ընկերության կառքի ետևից» (303-304): Այս երկար մեջբերումը ես ինձ թույլ տվի կատարել իբերյանի հայացքների մի քանի կարևոր նրբերանգները ցուցադրելու համար: Ընթերցողը անմիջապես պիտի տեսնի, որ այս հայացքներում նոր բան չկա. եվրոպական 19-րդ դարը Շոպենհաուերից մինչև Նիցշե ծամծամել է այս գաղափարները, որոնք ժամանակին նոր էին ու հրապուրիչ եվրոպական հոգնած հասարակության համար, մանավանդ իրենց հակաբուրժուական, հակաքաղաքենիական ուղղվածությամբ: Բայց 20-րդ դարի 20-ական թթ. Հայաստանի և ամբողջ հայ ժողովրդի հասարակական կյանքի կոնտեքստում դրանք արդեն չէին կարող լուրջ ազդեցություն ունենալ. թերևս, միակ արդարացումը դրանց այն էր, որ հիմա էլ պետք է հակադրվեին «կուսակցական-բանկոռպային» հոգեբանությանը:

Բայց շոպենհաուերյան-նիցշեական արմատներ ունեցող այս բոլոր հայացքները ծայրահեղացումներ էին այն ճշմարիտ քննադատության, որ Ջարյանն անում է և՛ կապիտալիզմի, և՛ խորհրդային սոցիալիզմի հասցեին, և շատ լուրջ նշանակություն նրա հայացքների համակարգում

չէին կարող ունենալ: Իբերյանը՝ հենց միայն թեկուզ իբրև իր ժողովրդի որդին, չէր կարող լինել այդ հայացքների համոզված հետևորդը, այլապես նա չպետք է այդքան տառապեր ոչ միայն անհատի, այլև, և թերևս ավելի շատ, իր ժողովրդի, իր հայրենիքի ճակատագրով, այլ էջերում չպետք է այնքան տեղ տար քրիստոնեության պաշտոնյաներին և հայրենիքի հանդեպ նրանց սիրուն:

* * *

Երեսնական թթ. 4. Ջարյանը հրատարակել է ևս մի քանի գործեր, որոնք ամբողջացնում են նրա արձակի պատկերը: Դրանք սերտորեն կապված են նրա «գաղափարների վեպի» հետ և լրացնում ու խորացնում են դրանք: Նախ՝ հիշենք նրա երկու ծավալուն ուղեգրությունները՝ «Սպանիա» և «Միացյալ Նահանգներ»: «Անցորդը» շարունակում էր իր ճանապարհը: Երկուսն էլ շատ կարևոր տեղ են գրավում Ջարյանի ստեղծագործության մեջ: Դրանք, նախ՝ օգնում են ավելի խորն հասկանալու նրա արդեն հիշատակված վեպերը, նրա վերաբերմունքը խորհրդահայ իրականության հանդեպ: Եվ ապա, թվում է, դրանց մեջ, հատկապես «Սպանիայի» մեջ, Կ. Ջարյանը ավելի մոտ է ինքն իրեն. ուղեգրություն-խոհագրության ժանրը շատ ավելի հարազատ է նրա հոգուն, քան վեպի ժանրը: Այս գրքերում մեր առջև ծավալվում է Ջարյանի հոգու «ներքին դաշտանկարը», ազատ խորհրդածությունը ավելի բնական է նրա գրչի համար, քան գրական հերոսների, բախումների, հոգեբանությունների աշխարհը: Իսպանիան թերևս այն միակ երկիրն է, որը նրան հոգեհարազատ է (ի բաց առյալ Չայաստանը. Իսպանիան նրան հրապուրում է հենց Չայաստանի հետ ունեցած որոշ ընդհանրություններով, ինչպես մի քանի անգամ նա ասում է իր գրքում): Իսպանիան նրան ներկայանում է իբրև ոգու երկիր, և առհասարակ Ջարյանը միշտ և ամենուրեք փնտրում է մարդկային ոգին, ոգին առաջին հերթին, և այն ամենը, ինչ թշնամի է հոգուն, առաջացնում է նրա ծայրահեղ հակակրանքը: Սա թերևս այսօր ամենից աչքի ընկնող նրա առանձնահատկությունն է: Մեր ժամանակները, որոնք այնքան վերևից են նայում ոգուն, հատկապես գնահատելի են դարձնում Ջարյանի այս գիծը: Հենց այդ նույն պատճառով Ջարյանը խորապես մերժում է ամերիկյան մշակույթը, մերժում է մի կրքոտությամբ, որը երբեմն կարող է անարդարացի համարվել: Բայց ինքը հավատարիմ է իրեն, իր աշխարհատեսությանը, և նրա մերժումը ի վերջո չի կարող համակրանք չհարուցել: Ամերիկայում նա տեսնում է ոգու նա-

հանջը և նյութի հաղթանակը: Ամերիկացիները նրան ներկայանում են իբրև հոգով խեղճ, պարզունակ մարդիկ, և այդ գնահատականներից չեն խուսափում նաև մեր այն հայրենակիցները, որոնք հայտնվել են Ամերիկայում: Ամերիկյան նրա երկիրը չէ, ամերիկյան իդեալը նրա իդեալը չէ. ահա թե ինչու հենց Իսպանիան ու Հայաստանն են նրան այդքան հրապուրում: Իսկապես երկրներ, որոնք շատ տարբեր են Ամերիկայից:

Կարելի է պնդել, որ Կոստան Ջարյանի ամբողջ արձակի հիմքում ընկած է ինտելեկտուալ անցորդի հայացքը աշխարհին, անցորդ, որը մի կողմից, ոչ առանց հիացման, գիտակցում է իր՝ «հորիզոններ ճեղքող» լինելու հանգամանքը, մյուս կողմից՝ սեփական արմատներից կտրված լինելը և ամբողջ էությանը ձգտում է վերադառնալ դրանց:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերջին տարիներին Կոստան Ջարյանի մասին լույս են տեսել մի քանի հոդվածներ և մենագրություններ՝ Արծրուն Ավագյան, Կոստան Ջարյան. կյանքը և գործը, Երևան, 1998, Վարդան Մատթեոսյան, Կոստան Ջարյանի շուրջ (ուսումնասիրություն), Անթիլիաս, Լիբանան, 1998, հրատարակություն Գեորգ Մելիպինեցի գրական մրցանակի, թիվ 32, նույն հեղինակի՝ Կոստան Ջարյանի առաջին տարիները. Կովկասեն մինչև եվրոպական ուստաններ, «Հանդես ամսօրյա», 1997:

Կոստան Ջարյանի ժառանգության ուսումնասիրության համար շատ շահեկան են նրա երկերի վերջին երևանյան հրատարակությունները, որ իրագործել է Յուրի Խաչատրյանը՝ Երկիրներ և աստվածներ, Սպանիա, 1998, Նավատոմար, 1999, Դեպի Արարատ, 2001, Միացյալ Նահանգներ, 2002: Բոլոր այս հրատարակությունները ունեն ներածական հոդվածներ և մանրամասն ծանոթագրություններ:

2. «Հայրենիք», 1926, 12, էջ 14:

3. Կոստան Ջարյան, «Բանկոպը և մամուլի ոսկորները», Անթիլիաս, 1987, էջ 641:

4. Հմմտ. Ա. Ավագյան, Կոստան Ջարյան. կյանքը և գործը, էջ 230:

5. «Բանկոպը և մամուլի ոսկորները» վեպից կատարված քաղվածքները՝ ըստ Անթիլիասի 1987 թ. հրատարակության. էջերը նշվում են տեքստում:

6. Առհասարակ շատ հետաքրքրական է Կ. Ջարյանի և 20-րդ դարի սկզբի հայ գրողների առնչությունների հարցը: Հատկապես Վահան Տերյանի և Եղիշե Չարենցի հետ ունեցած շփման կետերը կարևոր են այդ շրջանի հայ գրականության առաջատար գաղափարները պարզելու համար: Ամենահամառոտ ձևով այստեղ ներկայացնենք միայն Տերյանի և Ջարյանի առնչությունների խնդիրը:

Տեքստում եղած հպանցիկ դիտողություններին ավելացնենք հետևյալը: 20-րդ դարի տասական թթ. Վահան Տերյանը լարված խորհում էր հոգևոր Հայաստանի մասին: Եվ դրա ապացույցը միայն համամուն հողվածը չէր: Ամբողջ «Երկիր Նաիրի» շարքը ստեղծված է հոգևոր Հայաստանի մտահոգությամբ, հայրենիքի ոգին հասկանալու կրքոտ ցանկությամբ: Եթե այդ շարքում փնտրենք Հայաստանի պատկերը, դա կլինի հոգևոր Հայաստանի կամ Հայաստանի ոգու պատկերը, որը Տերյանը որոշակիորեն հակադրում է նյութական երկրին: Այստեղ պետք է փնտրել 4. Ջարյանի հոգեհարազատությունը Տերյանի հետ՝ չմոռանալով նրանց բոլոր սկզբունքային տարբերությունները: Ջարյանն էլ Տերյանի պես փնտրում է Հայաստանի հոգին, առհասարակ, ինչպես ասվեց տեքստում, նա կրքոտ կերպով հակադրում է հոգին կոպիտ նյութականությանը: Ամենուրեք, ինչպես փորձեցինք ցույց տալ, նա ոգին է փնտրում, և, իհարկե, առաջին հերթին Հայաստանում Հայաստանի ոգին է փնտրում: Եվ նրա ընդվզումը հայ քաղքենիության ու հայ բուրժուազիայի դեմ շատ մեծն է այն տրամադրություններին, որ արտահայտված են Տերյանի «Հոգևոր Հայաստան» հողվածում: Ահա մի քաղվածք 1930-ին գրված հերթական «Նավատոմարից». «Հայը... կարողանում է ըմբռնել այդ իդեալը՝ Միացյալ Հայաստանը, ոչ իբրև հոգեկան ուրույն արժեքով օժտված և տիեզերական կյանքի մեջ իր որոշ աշխարհագրությունը բերելու կոչված մի ստեղծագործող ազգի բնակավայր, այլ ինչպես շատ հող, մեծ տարածություն ու հարստություն ունեցող նյութական պահանջ» («Նավատոմար», էջ 315):

7. Քսանական թթ. վերջերին Ջարյանը կտրուկ բացասական կարծիքներ է արտահայտել արևմտյան մշակույթի և նրա հեռանկարների մասին՝ դրան հակադրելով Արևելքի մշակույթը և դրա մեջ դնելով նաև հայկականը: Ահա թե ինչ է ասում քսանական թթ. «Արևմուտքը խենթացած գազանի նման քերում է երկրագնդի մակերեսը նոր գանձեր գտնելու համար և անգիտակցաբար փորում է իր գերեզմանը: 18-րդ դարից նա ժառանգել է նյութապաշտ իմացականության դյուրին զենքը, որով կարողանում է հաղթել բնության տարրական ուժերին: Նա ուրանում է հոգեկան արժեքների տարրական շաղկապումը, արդը իրի է վերածում, ազգությունը՝ տնտեսական ազդակի ու խորհուրդը՝ նախապաշարումի... Նոր մշակութային շրջանը սկսվում է Արևելքում» (Նավատոմար, էջ 226): 4. Ջարյանի այս դիրքը հետաքրքրական էր առնվազն երկու տեսակետից. մի կողմից, ինքը, անկասկած, եվրոպական մշակույթի կրող էր, այն նույն մշակույթի, որի մայրամուտի մասին դատողություններ է անում: Այստեղ նա միայնակ չէ և մոտենում է, ասենք, գերմանական փիլիսոփա Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» հայտնի գրքում արտահայտված տեսակետներին (ինքն էլ Շպենգլերին և Կայզերլինգին հաճախակի է հիշատակում իր գրությունների էջերում): Եվրոպական մշակույթի ավարտը քսան-երեսնական թթ. բուն Եվրոպայում տարած-

ված կարծիք էր: Բայց արևամուտ ապրող Եվրոպային այդքան հստակորեն Արևելքը հակադրելը նրան մոտեցնում էր այն հայ գրողներին, որոնք այդ հակադրությունը շատ սուր տեսել էին դեռ տասական թթ., մասնավորապես Յուլիաննես Թումանյանին: Ջարյանի ընթերցողները գիտեն, որ նա Թումանյանի մասին բարձր կարծիք չունեւ: Բայց ահա այսպես, ծայնակցում էր նրան: Այս իրողությունը մի անգամ ևս ընդգծում է Կոստան Ջարյանի գրաված յուրատեսակ տեղը քսաներորդ դարի հայ գրականության մեջ...